

1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

1.4.1.Ջրաղվածություն

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը 2002թ. հունվար-հոկտեմբերին հանրապետությունում, ըստ գնահատման, կազմել է 1417.2 հազ.մարդ, որից 90.5%-ը կան 1282.5 հազ.մարդ զբաղված է եղել տնտեսության մեջ, իսկ 9.5%-ը կան 134.7 հազ.մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) չի ունեցել աշխատանք, գրանցվել է ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

2002թ. հոկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում հաշվառման կանգնած է եղել 156.2 հազար աշխատանք փնտրող, որից 99.1%-ը կան 154.8 հազարը՝ չզբաղվածներ են: Գործազուրկի կարգավիճակ ստացել է չզբաղվածների 83.9%-ը կան 129.9 հազ. մարդ:

2002թ. հոկտեմբերին ծառայության կողմից հաշվառման վերցվել է 1.6 հազ.մարդ, որից 1.1 հազարը կան 68.8%-ը ստացել է գործազուրկի կարգավիճակ: Նույն ժամանակամիջոցում հաշվառումից հանվել է 2.5 հազ.մարդ, որից 28.0%-ը՝ աշխատանքի տեղավորման պատճառով:

Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի 2002թ. հոկտեմբերին¹

	Աշխատանք փնտրող քաղաքացիների թվաքանակը		Գրանցից՝ գործազուրկներ	
	ընդամենը, հազ. մարդ	%- ով՝ նախորդ տարվա հոկտեմբերի նկատմամբ	ընդամենը, հազ. մարդ	%-ով՝ նախորդ տարվա հոկտեմբերի նկատմամբ
Ընդամենը ՀՀ	156.2	94.9	129.9	92.3
ք.Երևան	38.2	87.4	34.8	86.1
Արագածոտն	2.2	100.0	1.5	100.0
Արարատ	6.7	87.0	5.3	86.9
Արմավիր	8.4	90.3	6.0	85.7
Գեղարքունիք	8.7	96.7	6.4	98.5
Լոռի	25.7	103.2	21.4	100.5
Կոտայք	9.6	84.2	7.2	78.3
Շիրակ	33.3	99.1	28.2	96.2
Սյունիք	16.4	101.9	13.7	100.7
Վայոց ձոր	2.1	105.0	1.7	100.0
Տավուշ	4.9	104.3	3.7	88.1

Կանայք կազմել են պաշտոնապես գրանցված գործազուրկների 66.9%-ը: Նրանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում 2001թ. հոկտեմբերի նկատմամբ աճել է 1.1%-ով:

Աշխատուժի պաշտոնապես հայտարարված պահանջարկը 2002թ. հոկտեմբերի վերջին կազմել է 895 մարդ,այդ թվում 84.1%-ը կան 753-ը՝ բանվորական մասնագիտությունների գծով:

2002թ. հոկտեմբերին ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության միջնորդությամբ աշխատանքի է տեղավորվել 713 մարդ: Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը կազմել է 173 չզբաղված մարդ:

Հանրապետությունում նպաստառու գործազուրկների թվաքանակը 2002թ. հոկտեմբերին կազմել է 6.5 հազ. մարդ, իսկ գործազրկության նպաստի միջին չափը՝ 3216 դրամ: Նույն ամսում դրամական օգնություն ստացել է 8.1 հազ.գործազուրկ: Դրամական օգնության միջին չափը կազմել է 1475 դրամ:

¹ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալներով: